Երևանի պետական բժշկական
համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր
Արմեն Աբգարի Մուրադյանին

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Ձեզ՝ 2026 թվականի հունիսի 13-ին ARATTA 2026 «Քթի առաջնային և երկրորդային վիրահատություններ» թեմայով ՇՄՁ կրեդիտավորված գիտաժողովի կազմակերպմանն աջակցելու և ԵՊԲՀ «Խոստիկյան» դահլիճը տրամադրելու համար:

Մայր բուհում կայացած գիտաժողովը համախմբեց պլաստիկ վիրաբույժների, քիթ-կոկորդ-ականջաբանների, դիմածնոտային վիրաբույժների և կլինիկական օրդինատորների՝ ստեղծելով մասնագիտական փորձի փոխանակման և գիտելիքների հարստացման արդյունավետ հարթակ: Առաջատար մասնագետների բովանդակալից զեկույցներն ու քննարկումները մեծ հետաքրքրություն առաջացրին մասնակիցների շրջանում և նպաստեցին ոլորտի հետագա զարգացմանը:

Բարձր եմ գնահատում Ձեր աջակցությունը բժշկական կրթության և գիտական նախաձեռնությունների իրականացման գործում: Մեկ անգամ ևս շնորհակալություն եմ հայտնում ցուցաբերած աջակցության համար և հուսով եմ, որ համագործակցությունը կլինի շարունակական:

Հարգանքով՝
Պլաստիկ, ռեկոնստրուկտիվ և էսթետիկ
վիրաբույժների հայկական ասոցիացիայի
նախագահ՝

Է. Լ. Հայրապետյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼԱՍՏԻԿ ԵՎ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԵՎ ԷՍԹԵՏԻԿ ՎԻՐԱԲՈՒՅԺՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼԱՍՏԻԿԱԿԱՆ, ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԱՅԻՆ ԵՎ ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՎԻՐԱԲՈՒՅԺՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ՀԿ
"NON-GOVERMENTAL ORGANIZATION"
01553372
"ARM. ASSOC. OF PLASTIC, RECONSTRUCTIVE AND AESTHETIC SURGEONS" NGO

15/06/2026թ.